

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոգիես ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊԶԲ-26/97 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի
	տեխնիկական բնութագիրը
1	Թատրոնի բեմի պրոյեկցիոն համակարգը բաղկացած է պրոյեկտորներից, օբյեկտիվներից, HDMI մալուխներից, ցանցային բաժանարարից, ցանցային մալուխից, համակարգչից, որոնք պետք է համապատասխանեն կից ներկայացված տեխնիկական առաջադրանք-1-ին: Եթե անհրաժեշտություն առաջանա, Մատակարարը պարտավոր է իր հաշվին և իր միջոցներով տրամադրել տեխնիկական առաջադրանք-1-ում չնշված՝ լրացուցիչ սարքեր, սարքավորումներ, մասեր և պարագաներ, որ սույն համակարգը գործի: Երաշխիքային ժամկետ սահմանել 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Լրակազմում նշված ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Լրակազմի տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը, մոնտաժումը (անհրաժեշտության դեպքում համապատասխան կախիչներով), ծրագրավորումը (եթե անհրաժեշտ է), փորձարկումը, ինչպես նաև համապատասխան մասնագետի հրահանգավորումը իրականացվում է Մատակարարի կողմից: Համակարգում ներառվող սարքերը, սարքավորումները, մասերը և պարագաները (ներառյալ դրանցում կիրառվող տեխնոլոգիաները) պետք է լինեն համատեղելի միմյանց հետ: Ապրանքների տեղաբաշխումը, լարանցումները և գունային լուծումները պետք է համաձայնեցնել Գնորդի հետ պայմանագրի կատարման փուլում՝ կապված տարածքի առանձնահատկություններից: Մասնակիցը կարող է տեղում տեսնել և ծանոթանալ տեղաբաշխման, լարանցումների և գունային լուծումների հնարավոր տարբերակներին: Վաճառողը պարտավոր է գործիքազննողական ուսումնասիրության ենթարկել թատրոնի դահլիճում գործող Էլեկտրասնուցման ներքին ցանցը (անհրաժեշտության դեպքում նաև արտաքին) և անհրաժեշտության դեպքում փոխարինել համապատասխան

հաղորդալարերով և էլեկտրատեխնիկական սարքավորումներով՝ սույն չափաբաժնի ապրանքների համար
Էլեկտրատեղակայանքների կառուցման կանոններին համապատասխան: Մասնակիցը կարող է տեղում տեսնել և
ծանոթանալ թատրոնի դահլիճում գործող Էլեկտրասնուցման ներքին ցանցին: Լրակազմում առաջարկվող
պրոյեկտորները պետք է համապատասխանեն հետյալ ստանդարտներից որևէ մեկին. IEC/EN 62368-1, EN 55032 +
EN 55035, IEC/EN 62471, IEC 60825-1, ինչպես նաև լրակազմում առաջարկվող ապրանքները պետք է
համապատասխանեն հետևյալ ստանդարտներից որևէ մեկին. CE Marking (Conformité Européenne), UL Certification
(Underwriters Laboratories), FCC Certification, CSA (Canadian Standards Association) Certification, IC (Industry Canada)
Certification, UKCA Marking (UK Conformity Assessed), BS (British Standards), Ofcom Certification, PSE Mark (Product
Safety Electrical Appliance and Materials), TELEC Certification (Radio Law Certification), JIS (Japanese Industrial
Standards):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոգիես в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԳՄՍՆԷԱՃԱՊԶԲ-26/97 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	